Լ. Միրիջանյանի անվան հ. 155 հիմնական դպրոց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը երեխայի հոգեբանական զարգացման մեջ

Ուսուցիչ՝ Գինոսյան Վարդուհի

Ղեկավար՝ Միրզոյան Թամարա

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն----------3

ԳԼՈՒԽ 1. Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների առանձնահատկությունները և դրանց դասավանդման մեթոդիկան----------5

ԳԼՈՒԽ 2. Տեղեկատվական տեխնոլոգիաների դրական և բացասական կողմերը, դրանց ներգործությունը երեխայի հոգեբանական զարգացման վրա----------10

Եզրակացություն----------14

Օգտագործված գրականության ցանկ----------16

Ներածություն

Տեղեկատվական դարաշրջանում կրթական համակարգում կատարվող արմատական փոփոխությունները սերտորեն առնչվում են տեղեկատվության և հաղորդակցության արդի միջոցների զարգացման և տարածման հետ: Տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստացույց, համակարգիչ, հեռախոս, համացանց և այլն) ազդեցությունը մեծ է բոլորի վրա և դրանց կիրառումը կազմում է մարդկանց օրվա մեծ մասը, ուստի այս ամենից զերծ չի մնում նաև դպրոցը: Կրտսեր դպրոցական տարիքում աշակերտներին դասավանդելիս վերը նշված մեթոդները ներկայումս սկսել են օգտագործել նաև ուսուցիչները: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է տալիս ավելի հետաքրքիր, գունեղ ու բովանդակալից դարձնել դասաժամը, սակայն միառժամանակ դրա սխալ և ոչ տեղին օգտագործումը կարող է բերել լրջագույն հետևանքների, որն անմիջապես կարող է ազդել երեխայի հոգեբանության և վարքագծի վրա: Այսպիսի երևույթներից զերծ մնալու համար ուսուցիչը նախ ինքը պետք է սովորի ճիշտ օգտվել այդ մեթոդների ընձեռած հնարավորություններից, ինքնակրթվի և դասարանի յուրաքանչյուր երեխայի ցուցաբերի անհատական մոտեցում, քանզի նրանց ապագան կախված է դպրոցում ստացած ճիշտ կրթությունից:

Այնուամենայնիվ ժամանակակից աշխարհում տեղեկատվական տեխնոլոգիաները շարունակում են զարգանալ և դրանցից ճիշտ օգտվելու դեպքում հնարավոր է երեխաներին ավելի հեշտորեն ներգրավել դասապրոցեսի մեջ և նրանց բազմակողմանի գիտելիքներ տալ:

Ուսումնասիրության առարկան և նպատակը: Մեր ուսումնասիրության առարկան ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերն է երեխայի հոգեբանական զարգացման մեջ: Նպատակն է ցույց տալ տեղեկատվական տեխնոլոգիաների թողած դրական և բասացական հետևանքները և դրանց ճիշտ կիրառմամբ նպաստել աշակերտների գաղափարապես զարգացմանը:

Հետազոտության խնդիրները: Մեր հետազոտության խնդիրներն են վեր հանել այն դժվարությունները, որոնք կարող են առաջանալ տեղեկատվական տեխնոլոգիաներով դասերն անցկացնելիս և գտնել այնպիսի միջոցներ, որոնք կօգնեն առավել արդյունավետ դարձնել կրթական գործընթացը: Կարևոր է նաև այս մեթոդների օգտագործման միջոցով չազդել երեխայի հոգեբանության վրա և դրանից քաղել միայն դրական արդյունք:

Արդիականությունը: Մեր հետազոտության թեման արդիական է, քանի որ օրեցօր զարգացող աշխարհում մարդկանց կյանքում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում տեղեկատվական տեխնոլոգիաները: Դրանց կիրառման չարաշահումը կարող է ազդել ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխաների վրա, ուստի պետք է հատկապես դպրոցում առավել ուշադիր լինել երեխաների հետ աշխատելիս: Պետք է տեղակատվական տեխնոլոգիաները նպատակային կիրառել և դրանցից օգտվելիս ուղղորդել երեխաներին:

Մեր հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների առանձնահատկությունները և դրանց դասավանդման մեթոդիկան

Ներկայիս ժամանակներում մարդը մուտք է գործել տեխնոլոգիաների նոր դարաշրջան, որն արագ տեմպերով փոփոխության է ենթարկել նրա հասարակական կյանքը: Սկզբնական շրջանում հեռուստացույցը, այնուհետև համակարգիչն ու հեռախոսը դարձան մարդու կյանքի անբաժանելի մասը, արդի շրջանում այս տեղեկատվական տեխնոլոգիաներին միացավ նաև համացանցը, որն ավելի շատ հնարավորություններ ստեղծեց մարդկանց հետ շփվելու և տարատեսակ գործիքներից օգտվելու կյանքի տարբեր բնագավառներում: Տեղեկատվական տեխնոլոգիաներն իրենց ազդեցությունն ունեցան նաև կրթական գործընթացի կազմակերպման վրա, այսպիսով կրթության ավանդական մեթոդներին եկան փոխարինելու նոր և ժամանակակից մեթոդները:

Տեղեկատվական դարաշրջանում կրթության բնույթի մեջ կատարվող արմատական փոփոխությունը սերտորեն առնչվում է տեղեկատվության և հաղորդակցության արդի միջոցների զարգացման և տարածման հետ: Ինֆորմացիոն աշխարհն իր բոլոր դրսևորումներով ազդում է մարդու արժեքային համակարգի, արժեքային կողմնորոշումների ու դիրքորոշումների, նպատակների ու ցանկությունների, երազանքների ու իդեալների ձևավորման, մարդկային փոխհարաբերությունների կառուցման վրա: Այսինքն՝ տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են ազդել երեխայի աշխարհայացքի ձևավորման վրա:

Երեխայի ձևավորումն ու զարգացումը սկսվում է ընտանիքից, երեխան արդեն որոշակի առանձնահատկություններով օժտված մուտք է գործում դպրոց, որտեղ նրա մարդ տեսակի ձևավորման և կրթական գիտելիքների հարստացման համար միակ պատասխանատուն դառնում է ուսուցիչը: Այս ամենից ելնելով ուսոցիչը պետք է պատասխանատվություն վերցնի իր վրա և փորձի դաստիարկել այնպիսի անձ, որը կունենա բարձր արժեքային համակարգ, կլինի գիտելիքներով զինված և կկարողանա կյանքում իրեն ճիշտ դրսևորել: Ուսուցիչը երեխային գիտելիքներ փոխանցողն է, նրա ինֆորմացիայի աղբյուրն է և նրա համար լավագույնի օրինակն է: Կրթության գլխավոր արդյունքներից մեկը պետք է լինի անհրաժեշտ տեղեկատվությունն ինքնուրույն ձեռք բերելու, հիմնախնդիրները տեսնելու և դրանց լուծման ճանապարհները գտնելու, ստացած գիտելիքները

քննադատաբար վերլուծելու և դրանք նորանոր խնդիրների լուծման համար կիրառելու կարողությունները[1]:

Արդի տեխնոլոգիաների նշանակության աճը և դրանց տիրապետելու անհրաժեշտությունը բերում են գրագիտության նոր, ավանդականից տարբեր հասկացության, մեծ փոփոխության է ենթարկվում նաև սովորելու և սովորեցնելու բնույթը: Ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ուսուցչի և աշակերտի համատեղ, միաժամանակյա գործունեությամբ: Այս գործընթացում կարևոր է աշակերտների ճանաչողական գործունեության ակտիվացումը, նոր հնարների, մեթոդների կիրառումը՝ գիտելիքների գիտակցական և առավելագույն յուրացման համար: Ուսուցիչը պետք է երեխաներին սովորեցնի տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու հմտությունները և շեշտակիորեն առանձնացնի դրանցից յուրաքանչյուրը.

Հեռուստացույց. աշակերտները պետք է իմանան, որ իրենց ժամանակը դասերից դուրս կարող են անցկացնել հեռուստացույց դիտելով, բայց սահմանված ժամանակով: Իհարկե, երեխաները կամա թե ակամա չեն հետևում այս կանոններին, ուստի շատ կարևոր է ծնողների ուշադրությունը, այս առումով ծնողներն էլ պետք է կրթված լինեն և իմանան, որ երեխաներին թույլատրվում է հեռուստացույց դիտել մինչև ժամը 21:00-ն: Այս ամենին կարելի է հասնել, եթե լինի ոչ միայն ուսուցիչ-աշակերտ, այլ նաև ուսուցիչ-ծնող համագործակցություն:

Համակարգիչ. երեխաները համակարգիչն օգտագործում են տարբեր նպատակներով՝ մուլտֆիլմեր դիտել, խաղեր խաղալ, ինֆորմացիա ձեռք բերել, ընկերների հետ շփվել և այլն: Կախված այս գործառույթներից համակարգչից օգտվելը նույնպես պետք է լինի չափավոր և ծառայի իր ճիշտ նպատակին: Օրինակ՝ ուսուցիչը կարող է հանձնարարել տեսանյութերի դիտում, որոնք աշակերտները կարող են կատարել տանը՝ համակարգչի միջոցով, սակայն եթե նրանք համակարգիչն այլ նպատակով են օգտագործում և իրենց ժամանակի մեծ մասը դրա դիմաց են անցկացնում, ապա այն միանշանակ բացասական է անդրադառնում նրանց վրա: Համակարգչային կախվածությունն անչափահասների շրջանում կարող է հանցավոր վարքի դրսևորման պատճառ դառնալ, առաջացնել լքվածության և տագնապի զգացում: Այս ամենից խուսափելու համար անհրաժեշտ

[1] Աստվածատրյան Մ.Գ.,Թերզյան «Տեղեկատվական, հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում»., Երևան, 2004, էջ 24-26

է ուսուցիչ-աշակերտ փոխհամագործակցություն և ուսուցչի կողմից ճիշտ մեթոդների կիրառում:

Հեռախոս. գոյություն ունի մի տարիք, որից այն կողմ նոր թույլատրվում է երեխաներին օգտվել հեռախոսից, քանի որ կրտսեր դպրոցական տարիքում դրա անհրաժեշտությունը չի նկատվում: Այստեղ չափազանց կարևոր է ծնողների դերակատարումը, քանի որ այժմ բավականին շատ է այն ծնողների թիվը, որոնք պարզապես երեխային լռեցնելու համար նրան հեռախոս են տալիս և զբաղվում են իրենց գործերով, մինչդեռ այդ ընթացքում երեխան կարող է այնպիսի տեղեկատվություն ստանալ, որը կարող է ազդել նրա հոգեբանության վրա և մղել այնպիսի քայլերի, որոնք գուցե անդառնալի հետևանքներ ունենան: Իհարկե, պետք է խրախուսել երեխային, կատարել նրա ցանկությունները, բայց հարկ եղած դեպքում նրա իսկ շահերից ելնելով զրկել որոշ բաներից:

Համացանց. երեխաները համակարգչից, հեռախոսից օգտվում են հենց համացանցի միջոցով, ուստի այստեղ էլ պետք է լինեն նրանց համար սահմանափակումներ: Համացանցում ինֆորմացիան բաց է և յուրաքանչյուր երեխա շատ հանգիստ կարող է այնտեղից վերցնել իր համար ոչ պիտանի տեղեկատվություն: Կարևոր է դպրոցում դաստիարակել մեդիագրագետ անձ: Մանկավարժության մեջ խիստ հրատապ ու կարևոր է դառնում նոր ուղղություն՝ մեդիակրթության ի հայտ գալը, որն օգնում է սովորողներին ուսումնասիրել զանգվածային հաղորդակցության օրինաչափությունները, ազդեցության մեխանիզմները և դրանց մանիպուլիացիաներից պաշտպանելու միջոցները:

Մեդիակրթության հիմնական խնդիրներն են՝

. նախապատրաստել նոր սերնդին ժամանակակից տեղեկատվական հասարակության պայմաններում ապրելուն

.սովորեցնել ճիշտ ընկալել բազմազան ու բազմաբնույթ տեղեկատվությունը

•հասկանալ, գիտակցել սովորողի հոգեկանի վրա ազդեցության մեխանիզմները

• յուրացնել շփման, հաղորդակցության ոչ լեզվական ձևերը:

Տեղեկատվական տեխնոլոգիաներն անհրաժեշտ են ժամանակակից դասավանդման գործընթացում: Տեղեկատվական նորանոր տեխնոլոգիաներով հագեցած հարափոփոխ մեր աշխարհում ուսուցիչներին ու աշակերտներին անհրաժեշտ է ճիշտ տեղեկատվություն, ճիշտ աղբյուրներից և ճիշտ ժամանակին: Աշակերտների առաջադիմությունը կարող է մեծապես շահել, երբ ուսուցման ու ուսումնառության գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը լինի նպատակային:

Դպրոցական պրակտիկայում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմնական ուղղություններն են.

. համակարգիչը՝ որպես գիտելիքների ստուգման միջոց,

. լաբորատոր գործնական աշխատանք՝ համակարգչային մոդելավորման կիրառմամբ,

. տեխնոլոգիաները՝ որպես ցուցադրման միջոց նոր նյութը բացատրելու ընթացքում,

. անհատական համակարգիչը՝ որպես ինքնակրթության միջոց [2]:

Օրինակ՝ ուսուցիչը կարող է հանձնարարել հեքիաթի ընթերացանություն և դրա համանուն ֆիլմի դիտում: Աշակերտները պետք է տանն ընթերցեն գիրքը, իսկ դասարանում բոլորով միասին համակարգչի միջոցով դիտեն ֆիլմը: Տվյալ դասաժամի ընթացքում կծավալվի քննարկում, կտարվի համեմատություն ֆիլմի և գրքի միջև և այսպիսով դասաժամն ավելի արդյունավետ ու հետաքրքիր կանցնի:

Կարելի է նաև բացի դասագրքում եղած թեմայի ուսումնասիրությունը, ուսուցիչն աշակերտներին հանձնարարի այդ թեմայի վերաբեյալ հավելյալ տեղեկատվություն որոնել համացանցում, այն առանձնացնել և ներկայացնել հաջորդ դասաժամին: Այս մեթոդով աշախկերտն ինքը կկարողանա ինֆորմացիա գտնել և աշխատել դրա հետ՝ մշակել այն, առանձնացնել կարևոր դրույթները և ներկայացնել ուսուցչին և դասընկերներին:

Տեղեկատվական տեխնոլոգիաների, լրատվամիջոցների զարգացման պայմաններում ոլորտի մասնագետներն առանձնացնում են տեղեկատվական, մշակութային, գիտելիքային շահագործման առաջացման վտանգները[3]: Այս դեպքում շահագործումը դրսևորվում է գովազդի, հեռուստատեսության և հաղորդակցության տարատեսակ միջոցների օգնությամբ՝ արհեստական պահանջմունքներ, վարքի ծրագրավորված կանոններ, կեղծ ու խեղաթյուրված իդեալներ և արժեքներ ներշնչելու միջոցով մարդու շահերի ու հայացքների մանիպուլացիաների տեսքով: Այս գործընթացում գլխավոր դեր ունեն անձի սոցիալական դիրքորոշումների ձևավորման ներհոգեկան մեխանիզմները[4]:

Այսպիսով, որքան էլ տեղեկատվական տեխնոլոգիաները կարևորվում են և օգնում դասերն ավելի արդյունավետ անցկացնել, այնուամենայնիվ պետք է չափազանց ուշադրությամբ դրանք կիրառել և այնպես անել, որ այդ գործիքների

---

[2] Աստվածատրյան Մ., Թերզյան Գ. և ուրիշներ, Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, Ասողիկ, Երևան, 2004 47 էջ

[3] Թոֆլեր Է., «Գիտելիքն ու իշխանությունը տեղեկատվական հասարակության մեջ», Երևան, 2006 թ., էջ 59

[4] Վ. Միրաքյան, Ագրեսիվ հեռուստատեսության հետևանքները, Երևան, 2012 թ, 8 էջ

կիրառումը չվնասի երեխաներին: Ցանկացած պարագայում ողջունելի է նոր մեթոդների կիրառումը և դրանց նպատակային օգտագործմամբ ցանկալի արդյունքի հասնելը:

ԳԼՈՒԽ 2. Տեղեկատվական տեխնոլոգիաների դրական և բացասական կողմերը, դրանց ներգործությունը երեխայի հոգեբանական զարգացման վրա

Դպրոցական կրթության զարգացման ներկա փուլում կարևոր է նորագույն տեխնոլոգիաների ներդրումն ուսուցման գործընթացում: Ավանդական և ժամանակակից մեթոդներն այժմ համընթաց են առաջ շարժվում և լրացնում են մեկը մյուսին: Ուսուցիչը կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հետ աշխատելիս համատեղելով այս երկու մեթոդները՝ հնարավորություն է ունենում դասերն ավելի ինֆորմատիվ և բովանդակալից դարձնել և շարժել աշակերտների հետաքրքրասիրությունը: Ուսուցչի կարևորագույն գործառույթը սովորողների ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացները մանկավարժորեն կառավարելն է՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական, տարիքային առանձնահատկություններն ու ընդունակությունները, զարգացման մակարդակը, կրթական կարիքները՝ ստեղծելով համապատասխան մանկավարժական պայմաններ:

Տարրական դպրոցի ուսուցչի աշխատանքն առանձնահատուկ է իր նպատակով ու խնդիրներով, բովանդակությամբ, միջոցներով ու ձևերով: Նրա մանկավարժական գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է իր վարպետությամբ, որն իր մեջ պետք է ներառի մասնագիտական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ: Տեղեկատվական տեխնոլոգիաներով դասերի անցկացումը մեծապես կարող է նպաստել արդյունավետ դասապրոցեսի անցկացմանը:

Նորագույն մեթոդների կիրառումը նպաստում է սովորողների՝

. ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը,
. հետազոտական, հաղորդակցական, համագործակցային կարողությունների ընդլայնմանը
. քննադատական, տրամաբանական մտածողության ձևավորմանը,
. մտքերի պարզ և հստակ ձևակերպելու կարողության զարգացմանը,
. իր տեսակետը հիմնավորելու, ապացուցելու կարողությունների ձևավորմանը,
. ուսուցիչ-աշակերտ համագործակցային աշխատանքի նոր որակի ապահովմանը:

Դժվար է պատկերացնել ժամանակակից կրթությունն առանց ինտերնետ ռեսուրսների: Ինտերնետային որոնման համակարգերը մանկավարժներին հնարավորություն են տալիս գտնել գործնականում ցանկացած զարգացնող և ուսումնական նյութ և դրանք ներակայացնել աշակերտներին: Տեղեկատվական

տեխնոլոգիաների կիրառումը դասերի ընթացքում կարող է ունենալ և՛ դրական, և՛ բացասական հետևանքներ:

Սկսենք տեղեկատվական տեղխոնոգիաների ամենահին ձևից՝ հեռուստացույցից: Հեռուստատեսությունը վարվելակերպի մոդելներ է ներկայացնում և որպես հետևանք՝ վարք է թելադրում՝ անկախ այն բանից, թե համապատասխան սոցիալական դիրքորոշումը քարոզվում է իրականությանը համապատասխան տեղեկատվություն պարունակող հաղորդման, հորինված գեղարվեստական ֆիլմի, թե մուլտֆիլմի միջոցով: Բազմաթիվ գիտափորձերով ապացուցվել է, որ նույնիսկ ամենաֆանտաստիկ ֆիլմը կարող է սոցիալական դիրքորոշումներ ձևավորել[5]: Հեռուստատեսությունում առկա գրավիչ և ոչ գրավիչ մոդելների միջոցով էլ իրականացվում է սոցիալական դիրքորոշումների, ապա նաև վարքի ձևավորումը: Իհարկե հեռուստատեսության միջոցով երեխան կարող է զարգանալ, միտքն առաջ մղել, երևակայությունը գործի դնել, բայց այնուամենայնիվ այնտեղ էլ ցուցադրվում են այնպիսի բաներ, որոնք երեխաների համար արգելված են (օրինակ՝ ալկոհոլային խմիչքների գովազդ): Արդարության համար պետք է նշենք, որ հեռուստացույցը գնալով իր տեղը զիջել է համակարգչին, հեռախոսին և համացանցին:

Այսօր երեխան աշխարհը ճանաչում է համակարգչի, համացանցի միջոցով՝ խաղեր, մուլտֆիլմեր, նկարներ, տեղեկատվություն և այլն: Համացանցը և համակարգիչն օգտակար և անհրաժեշտ ինֆորմացիայի աղբյուր են, երեխաներին հուզող բազմաթիվ հարցերի պատասխանները կարող են գտնվել հենց համացանցում: Համացանցից ճիշտ օգտվելու պարագայում երեխան միանշանակ կզարգացնի իր միտքը, ձեռք կբերի տարաբնույթ գիտելիքներ, կբավարարի իր հետաքրքրասիրությունը և կստանա իրեն հուզող հարցերի պատասխանները: Այս ամենի կողքին ցավոք առկա է նաև բացասական գիծը: Սխալ ինֆորմացիայի ստացումը, դրա յուրացումը կարող են երեխաների մոտ առաջ բերել հոգեբանական լուրջ խնդիրներ: Համացանցի լուրջ բացասական կողմերից մեկն այն է, որ այստեղ չի վերահսկվում ինֆորմացիան, չկան տարիքային սահմանափակումներ ու արգելքներ: Համացանցը լի է անորակ, չճշգրտված ինֆորմացիաներով:

Նախադպրոցական տարիքը, առավել ևս դեռահասության տարիքը սեռային ինքնագիտակցության, սեռային դերերի ու բնութագրերի յուրացման կարևոր շրջաններն են: Սեռերին ու սեռական կյանքին վերաբերող տեղեկատվության և տեսանյութերի, անառողջ փոխհարաբերությունների անարգելք ներկայացումը

[5] См. Берковиц Л., “Агрессия. Причины, последсвия и контроль”, изд. “прайм-Еврознак”, Москва, 2001 г., с. 247.

կարող է խեղաթյուրել դեռահասների ու պատանիների սեռական ոլորտի մասին պատկերացումները, բացասաբար ազդել սեռական հասունացման ընթացքի վրա և առաջացնել հոգեբանական խնդիրներ:

Համացանցի չարաշահման հետևանքներն անմիջապես ի հայտ են գալիս նաև դասարանում. դժվարություններ են առաջանում գիտելիքի և փորձի կապը հաստատելիս, ցրվում է ուշադրությունը և աշակերտը սկսում է կորցնել կենտրոնանալու ունակությունը, ինչպես նաև նվազում է հետաքրքրությունը վերացական, առօրյա կյանքին չառնչվող գիտելիքների նկատմամբ և այլն: Ոմանց համար բջջային սարքավորումներն ինքնարտահայտման միջոց են: Առանց այդ առարկայի նրանք միայնություն ու դատարկություն են զգում: Ուստի, դպրոցի ներսում բջջային հեռախոս օգտագործելու արգելքը կարող է լքվածության զգացում առաջացնել, ինչի հետևանքով հատկապես դեռահասը կարող է ինքնամփոփ դառնալ ու մեկուսանալ աշխարհից: Ժամանակակից տեխնոլոգիաների ճնշման տակ կատարվող երեխայի հոգեբանության փոփոխություններն առաջիկայում կարող են հանգեցնել լուրջ հետևանքների թե՛ երեխաների, թե՛ նրանց ծնողների համար:

Այս ամենը պետք է լինի ուսուցչի ուշադրության կենտրոնում, նրա խնդիրը պետք է լինի ոչ միայն պատրաստ նյութերի ներկայացումը, այլ համացանցում եղած նյութերի մեջ իրենց համար անհրաժեշտ տեղեկատվության զանազանումն ու ձեռքբերումը: Ուսուցիչը պետք է համագործակցի նաև աշակերտների ծնողների հետ, քանզի երկուստեք ջանքերով արդյունքն ավելի տեսանելի կլինի:

Չնայած այս ամենին՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հիմնական առանձնահատկությունները, որոնք օգնում են դասի ժամանակ ստեղծել բարենպաստ պայմաններ և հասնել նյութի յուրացման բարձր մակարդակին, հետևյալն են՝

. դիդակտիկ նյութերի ստեղծում և նախապատրաստում,

. ուսումնական նյութի վերաբերյալ շնորհանդեսի ստեղծում,

. պատրաստի ծրագրային արտադրանքի օգտագործում,

. դասին նախապատրաստվելու, արտադասարանական միջոցառումների, ինքնակրթության համար ինտերնետ ռեսուրսների փնտրում և օգտագործում, կրթության և դաստիարակության արդյունքներին հետևելու համար մոնիթորինգի ստեղծում,

. տեքստային աշխատանքների ստեղծում,

. մեթոդական փորձի ընդհանրացում էլեկտրոնային տեսքով[6]:

Ի վերջո կարող ենք փաստել, որ երեխայի ճիշտ դաստիրակությունը և առողջ հոգեբանական զարգացումը մեծապես կախված է ուսուցչի դերից: Որքան մեծ պատասխանատվությամբ և սիրով ուսուցիչը կատարի իր վրա դրված պարտականությունը, այնքան գրագետ և հասարակության համար արժանի քաղաքացիներ կդաստիարակի:

[6] Պետրոսյան Հ. Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2012թ

Եզրակացություն

Տեղեկատվական տեխնոլոգիաները շարունակում են ավելի զարգանալ ու կատարելագործվել: Դրա հետ մեկտեղ շարունակում է մեծանալ դրանց ազդեցությունը երեխայի հոգեբանական զարգացման գործում, ինչպես նաև ազդել նրա՝ որպես անձի ձևավորման վրա:

Դպրոցում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ ուղեկցվող դասերն իրենց պարզության և տեսանելիության շնորհիվ ուսումնական նյութի ընկալման ընթացքում առավել մեծ տպավորություն են թողնում սովորողների հոգեբանահուզական աշխարհի վրա: Դրանց ճիշտ և նպատակային կիրառումը կարող է շատ դրականորեն անդրադառնալ երեխայի լայն մտահորիզոնի ձևավորման վրա, այդ հարցում դպրոցում երեխայի ուղեկիցն ուսուցիչն է և դասերի ընթացքում նրա կիրառած տեխնոլոգիան: Սակայն չպետք է մոռանալ նաև տեղեկատվական տեխնոլոգիաների բացասական հետևանքների մասին, որոնք շատ հեշտությամբ կարող են ազդել նրա հոգեբանական զարգացման վրա:

Այստեղ տեղին է նշել, որ ժամանակակից հիմնախնդիրներից մեկը տեղեկատվական տեխնոլոգիաների հանդեպ կախվածության խնդիրն է: Երեխայի գիտակցությունը պետք է հասցնենք այն մակարդակի, որ նա ինքնամոռաց չտրվի տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած լայն հնարավորություններին և անուշադրության չմատնի դասերը: Այս ամենն ուսուցիչը պետք է կազմակերպի հետևելով երեխայի բնավորության առանձնահատկություններին և համագործակցելով նրա ծնողներին հետ: Միայն այս պարագայում հնարավոր կլինի խուսափել տեղեկատվական տեխնոլոգիաների բասացական հետևանքներից և կրթական գործընթացի վրա դրա հնարավոր վատ ազդեցությունից:

Այսպիսով, նշենք, որ ուսուցման ավանդական մեթոդների կողքին ժամանակակից մեթոդներն արդեն իրենց ուրույն տեղն են զբաղեցրել, դրանք կարողանում են բավարարել աշակերտների հետաքրքրասիրությունը, հնարավորություն են տալիս ավելի շատ տեղեկատվություն ստանալ, հարստացնում են ուսումնական գործընթացը և ազդում են նաև երեխաների հոգեբանական զարգացման վրա:

Այս ամենի ճիշտ կիրառումը գտնվում է ուսուցչի ձեռքում, եթե նա կարողանա տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ծառայեցնել դասերի արդյունավետ անցկացմանը, ապա դա հետագայում լայն հնարավորություններ կբացի իր սաների

համար: ՏՀՏ-ների կիրառումը դեռևս շարունակել է մնալ կրթական որակի վրա ազդող կարևորագույն գործիք, դրա տեղին օգտագործումը՝ անհրաժեշտություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աստվածատրյան Մ.Գ.,Թերզյան «Տեղեկատվական, հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում»., Երևան, 2004, էջ 24-26

2. Թոֆլեր Է., «Գիտելիքն ու իշխանությունը տեղեկատվական հասարակության մեջ», Երևան, 2006 թ., էջ 59

3. Վ. Միրաքյան, Ագրեսիվ հեռուստատեսության հետևանքները, Երևան, 2012 թ, 8 էջ

4. Պետրոսյան Հ. Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2012թ

5. См. Берковиц Л., “Агрессия. Причины, последсвия и контроль”, изд. “прайм-Еврознак”, Москва, 2001 г., с. 247.